

**Միջազգային բյուջետային գործընկերության (ՄԲԳ)
կորոնավիրուսի հետևանքների հաղթահարման համար
հատկացված աջակցության ծրագրերի հաշվետվողականության
համաշխարհային գնահատման քարտի հիմնական արդյունքները
և առաջարկությունները**

Հաշվետվողականության մակարդակները COVID-ի հաղթահարմանն ուղղված հարկաբյուջետային քաղաքականության վաղ արձագանքներում

Հաշվետվողականության մակարդակ	Երկրների քանակ (120-ից)	Երկրներ
Էական	0	
Համարժեք	4	Ավստրալիա, Նորվեգիա, Պերու, Ֆիլիպիններ
Որոշ չափով	29	Բրազիլիա, Բուլղարիա, Կանադա, Չիլի, Կոլումբիա, Կոստա Ռիկա Խորվաթիա, Դոմինիկյան Հանրապետություն, Ֆիջի, Ֆրանսիա, Գերմանիա, Ինդոնեզիա, Իտալիա, Ջամայկա, Ճապոնիա, Դրոգստան, Մալայզիա, Մոնղոլիա, Նոր Չեխանդիա, Պարագվայ, Լեհաստան, Պորտուգալիա, Սիերա Լեոնե, Սլովակիա, Սլովենիա, Հարավաֆրիկյան Հանրապետություն, Շվեդիա, Միացյալ Թագավորություն, ԱՄՆ
Սահմանափակ	56	Աֆղանստան, Արգենտինա, Հայաստան , Ադրբեջան, Բանգլադեշ, Բենին, Բոլիվիա, Բոսնիա և Հերցեգովինա, Բոտսվանա, Կամերուն, Չինաստան, Կոտ դ'Իվուար, Չեխիա, Էկվադոր, Եգիպտոս, Էլ Սալվադոր, Կրաստան, Գանա, Գվատեմալա, Հոնդուրաս, Հորդանան, Ղազախստան, Թեհրան, Լեսոտո, Լիբերիա, Մակեդոնիա, Մադագասկար, Մալի, Մեքսիկա, Մոլդովա,

		Մարոկկո, Մոզամբիկ, Նամիբիա, Նեպալ, Նիկարագուա, Նիգեր, Նիգերիա, Պակիստան, Պապուա Նոր Գվինեա, Ռումինիա, Ռուսաստան, Ռուանդա, Սան Տոմե և Պրինսիպի, Սենեգալ, Սերբիա, Սոմալի, Հարավային Կորեա, Իսպանիա, Շրի Լանկա, Թայլանդ, Թիմոր-Լեստե, Տոգո, Տրինիդադ և Տոբագո, Ուկրաինա, Վիետնամ, Չամբիա
Նվազագույն	31	Ալբանիա, Ալժիր, Անգոլա, Բուրկինա Ֆասո, Բուրունդի, Կամբոջա, Չադ, Կոմորյան կղզիներ, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն, Հասարակածային Գվինեա, Էսվատինի, Եթովպիա, Հունգարիա, Հնդկաստան, Իրաք, Լիբանան, Մալավի, Մյանմա, Քաթար, Սաուդյան Արաբիա, Հարավային Սուդան, Սուդան, Տաջիկստան, Տանզանիա, Գամբիա, Թունիս, Թուրքիա, Ուզանդա, Վենեսուելա, Եմեն, Չիլի

Հիմնական արդյունքներ

1. Իշխանությունները չեն իրականացրել հաշվետվողականության ընդլայնմանն ուղղված առանցքային միջոցառումները

Հետազոտության մեր ներառված երկրների համարյա կեսի իշխանությունները հիմնականում չեն ներկայացրել համապարփակ հաշվետվություններ կորոնավիրուսի հետևանքների հաղթահարմանն ուղղությամբ իրենց կողմից իրականացված միջոցառումների վերաբերյալ: Երկրների համարյա երկու երրորդի իշխանությունները հրապարակել են շատ սահմանափակ տեղեկատվություն համավարակին առնչվող գնումների վերաբերյալ: Երկրների միայն մոտ մեկ քառորդում է մինչև 2020թ վերջն իրականացվել համավարակի հետ կապված ծախսերի հաշվեթանություն: Վերջապես, հետազոտության մեջ

ներգրավված 120 երկրներից միայն 22 -ում է հրապարակվել տեղեկատվություն հանրային քաղաքականության այնպիսի նախաձեռնությունների վերաբերյալ, որոնք հատուկ թիրախավորել են կանանց (ներառյալ հղի և կրծքով կերակրող կանանց, կին գործարարներին, տնատնտեսություն գլխավորող կանանց, ընտանեկան բռնության զոհ կանանց, և այլն) և միայն երեք երկրներում (Կանադա, Ֆիլիպիններ և Շվեդիա) են հրապարակվել զեկույցներ համավարակի հետևանքների հաղթահարման միջոցառումների գեղեցրային ազդեցության վերաբերյալ:

2. Համավարակի ժամանակ օրենսդիր մարմինների դերը սահմանափակ էր

Հետազոտության մեջ ներառված երկրների համարյա կեսում իշխանությունները համավարակի հետ կապված ընդունում էին հարկաբյուջետային քաղաքականության միջոցառումների վերաբերյալ տարբեր տեսակի որոշումներ՝ շրջանցելով դրանց՝ օրենսդիր կողմից հաստատելու սովորական գործընթացը: Դա, չնայած, արդարացվում էր հրատապ քայլեր ձեռնարկելու անհրաժեշտությամբ, այնուամենայնիվ կանխում էր հանրային բանավեճը և, ի վերջո, թուլացնում կառավարության հարկաբյուջետային քաղաքականության որոշումների համարժեք քաղաքական աջակցությունը:

3. Համավարակի հետևանքների հաղթահարմանն ուղղված փաթեթների ընդունման և կիրարկման վերաբերյալ որոշումների կայացման վրա հանրության ազդեցությունը, մասնավորապես նրանց, ովքեր առավել շատ են տուժել ճգնաժամից, եղել է շատ քիչ կամ այն ընդհանրապես չի եղել

4. Ճգնաժամը ծնել է նորարարական որոշումներ

Հետազոտության մասնակից երկրների համարյա կեսում իշխանությունները ստեղծել են հեշտ գտնվող և մատչելի կայքեր՝ որում ներկայացված է եղել տեղեկատվություն համավարակի հետևանքների հաղթահարմանն ուղղված իրենց կողմից իրականացվող միջոցառումների մասին: Դրանց մի մասում եղել է միայն ընդհանուր տեղեկատվություն այդ միջոցառումների մասին, իսկ որոշներում ներառված է եղել մանրամասն տեղեկատվություն դրանց համար հատկացված միջոցների և ծախսերի վերաբերյալ:

Առաջարկություններ

1. Քայլեր ձեռնարկել հիմա՝ ուժեղացնելու համար համավարակի ճգնաժամին հակազդելուն ուղղված շարունակական միջոցառումների հաշվետվողականությունը
2. Ապագա ճգնաժամերին ավելի լավ պատրաստված լինելու նպատակով ուժեղացնել տարեկան բյուջետային գործընթացում ամրագրված հաշվետվողականության կարողությունները և հիմնարար համակարգերը
3. Աջակցել իշխանություններին՝ լինելու լիովին բաց և հաշվետու ներկա և ապագա ճգնաժամերի ժամանակ իրենց կողմից վարվող հարկաբյուջետային քաղաքականության հարցերում